

1122

ՍԵՆՏՅԱՄԻՆ ԿԻՑ ՄԱՐԳՍԻՆ - ԵՆԳԵՆՈՆ - ԼԵՆԻՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԼԱՌԻԶԵՎԻՑԻ  
“ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ,”  
ՅԵՐԿԵՐԻ ԱՌԹԻՎ

3K23

7-53

24 MAY 2005

Պոլիտարձեր բոլոր յերկրների, միացե՛ք

14 NOV 2009

ՀԱՄ Կ/Բ/Ն ԿԵՆՏՐՈՆԻԿ ԳԻՑ ՄԱՐԲՈՒ-ԵՆԳԵԼՍԻ-ԼԵՆԻՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

3K23

7-53

պ.

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԼԱՍԻԿԱԿԱՆ  
“ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ”  
ՅԵՐԿԵՐԻ ԱՌԹԻՎ

7122

10 SEP 2013



6116  
39

В. И. ЛЕНИН  
ЗАМЕЧАНИЯ НА  
СОЧИНЕНИЯ КЛАУЗЕВИЦА  
«О ВОЙНЕ»

Государственное издательство полит. литературы  
Ереван ● 1939

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի և սոցիալիստական հեղափոխությունը մոտենալու ժամանակաշրջանում, յերբ պատերազմական հարցերը բուլշևիկների կուսակցության համար ստացան առանձնապես մեծ նշանակություն, Լենինը ձեռնամուխ է լինում ազգական գործի կլասիկ և XIX դարի մտածող Կլաուզեվիցի յերկերի ուսումնասիրմանն ու մատերիալիստական վերամշակմանը:

Գեներալ Կարլ Կլաուզեվիցը (1780—1831) յեղել է փիլիսոփայություն և պատերազմների պատմության հարցերի վերաբերյալ ականավոր գրող, «Վորի գաղափարները բեղմնավորված էյին Հեգելի կողմից» (Լենին): Լինելով XVIII դարի վերջի ֆրանսական բուրժուական հեղափոխությանը ժամանակակից և նրան հաջորդող մի շարք պատերազմների մասնակից, նա կարողացավ քննարկել և ընդհանրացնել այն նորը, ինչ վոր ազգական արվեստի մեջ մտցրեց հեղափոխական դարաշրջանը: Կլաուզեվիցի մատուցած հսկայական ծառայությունը, Լենինի գնահատությունը, այն է, վոր նա պատերազմի՝ վորպես ուսուցանողի մի հասարակ ու պատահական ընդհարման՝ նկատմամբ յիշած քաղքենիական, տգետ հայացքին հակադրեց պատերազմի դիալեկտիկական ըմբռնողությունը, վորը Կլաուզեվիցի կողմից ձևակերպված է հետևյալ դրույթի մեջ. «Պատերազմը քաղաքականության շարունակումն է այլ միջոցներով»: Այս ասույթը (изречение),— գրել է Լենինը,— պատկանում է մի գրողի, վորը քննարկել է (обозревал) պատերազմների պատմությունը և փիլիսոփայական դասեր է հանել այդ պատմությունից—նապոլիոնյան պատերազմների դարաշրջանից կարճ ժամանակ հետո» (Յերկեր, հատ. XXX, էջ 333): Կլաուզեվիցի մտքերը պատերազմի, նրա դիալեկտիկական ու պատմական բնույթի մասին՝ ներկայումս դարձել են, ինչպես մասնանշում եր Լենինը, «յու-

բաքանչյուր մտածող մարդու անհրաժեշտ ձևերերանքը» (Նույն տեղում):

Կլաուզելիցի մեջ Լենինը տեսնում էր ռազմական տեսաբանի, վորն առաջին անգամ ճիշտ ըմբռնեց, վոր պատերազմը չի կարող դիտվել պատմությունից և հասարակական գարգացումից դուրս, վոր նա հանդիսանում է «ամբողջի մի մասը», իսկ «այդ ամբողջը. քաղաքականությունն է», վոր պատերազմը քաղաքականության զենքն է, և այդ պատճառով չի կարելի ըմբռնել պատերազմի էությունը, առանց ուսումնասիրելու այն քաղաքականությունը, վորը հասցրել է ավյալ պատերազմին, նախապատրաստել է այն: Կլաուզելիցը պնդում էր, վոր պատերազմը չի հանդիսանում և չի կարող հանդիսանալ ինչ-վոր ինքնուրույն մի բան, հասարակական կյանքից անկախ, վորովհետև նա ինքը կյանքի յե կոչվում քաղաքական պատճառներով, և ռազմական միջոցներով իրականացնում է քաղաքական նպատակներ, վոր յուրաքանչյուր պատերազմ պետք է դիտել այն դարաշրջանի հետ նրա ունեցած բոլոր կապերի մեջ, վորը ծնել է նրան: Կլաուզելիցը գտնում էր, վոր քաղաքական այդ հարաբերություններն իրենք չեն գաղարում պատերազմով, այլ շարունակվում են նաև պատերազմի ժամանակ: «Այն գլխավոր դժերը, վորոնցով զարգանում են պատերազմական իրադարձությունները, ուրվանկարված են քաղաքականության կողմից, վորն ազգում և պատերազմի վրա ընդհուպ մինչև հաշտությունը» (Կլաուզելից, Պատերազմի մասին, հատ. II, Պետ. ռազմհրատ, 1937 թ., էջ 374):

Քաղաքական և բարոյական գործոնի խոշորագույն նշանակությունն ու ուժը բանակի համար՝ Կլաուզելիցը բնորոշել է հետևյալ կերպ. «... յերևույթների մեծամասնությունը... բաղկացած է կիսով չափ Ֆիզիկական, կիսով չափ բարոյական պատճառներից ու հետևանքներից: Կարելի յեր ասել, վոր Ֆիզիկական յերևույթները նման են փայտե դաստապանի (рукоятка), մինչդեռ բարոյական յերևույթները ներկայացնում են ազնիվ մետաղից կովիված իսկական սուր սուսեր» (Նույն տեղում, հատ. I, էջ 197):

Լենինի դիտողությունները Կլաուզելիցի՝ «Պատերազմի մասին» աշխատություններին վերաբերյալ, ունեն տեսական և պրակտիկ հսկայական նշանակություն: Դրանք ցույց են տալիս, թե ինչպես պետք է մատերիալիստորեն, քննադատաբար վերամշա-

կել այն լավագույնը, ինչ ստեղծել է բուրժուական ռազմական գիտությունը, թե ինչպես և ինչ ուղղություններով պետք է մշակել մարքս-լենինյան ուսմունքը պատերազմի մասին:

Դեկավարվելով դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդով, Լենինը բացահայտեց պատերազմի իսկական էությունը: Իր «2-րդ Ինտերնացիոնալի» կրախը», «Պատերազմ և հեղափոխություն» և այլ յերկերի մեջ նա տվել է պատերազմի իր սպառիչ մարքսիստական բնորոշումը.

«Պատերազմը քաղաքականության շարունակությունն է՝ այլ միջոցներով: Ամեն մի պատերազմ անբաժանելիորեն կապված է քաղաքական հանրակարգի (срощ) հետ, վորից նա բղխում է: Նույն այն քաղաքականությունը, վոր մի վորոշ տերություն, այդ տերության ներսում յեղած մի վորոշ դասակարգ վարելիս է յեղել յերկար ժամանակվա ընթացքում պատերազմից առաջ, նույն այդ դասակարգն անխուսափելիորեն շարունակում է պատերազմի ժամանակ, փոխելով միայն գործողության ձևը»: (Յերկեր, հատ. XXX, էջ 333):

Լենինը առանձին ուշադրություն է նվիրում պաշտպանության և հարձակման փոխհարաբերության մասին Կլաուզելիցի դիալեկտիկական դատողությանը: Կլաուզելիցի յերկերից քաղվածք անելով այն տեղերը, վորոնք վերաբերում են այդ հարցին, Լենինը նշում է. «Անհետանում է տարբերությունը պաշտպանության և հարձակման միջև», «ուրիշ հողի վրա պաշտպանել իր հողը»: Լենինն այստեղ արժեքավորագույն ցուցնում է տալիս, վոր պաշտպանողական պատերազմը չի կարելի հանդեցնել միայն պաշտպանական գործողությունների, վոր իր հողը կարելի յե և պետք է պաշտպանել նաև ուրիշ տերիտորիայում, այսինքն՝ պաշտպանությունից անցնել հարձակողական գործողություններին:

Լենինի կողմից Կլաուզելիցին տրված գնահատականը համընկնում է նրա մասին Մարքսի և Ենգելսի առույթներին: Ենգելսը Մարքսին ուղարկած 1858 թ. հունվարի 7-ի իր նամակում գրում էր. «Ի միջի այլոց այժմ կարգում եմ պատերազմի մասին Կլաուզելիցի աշխատությունը: Փիլիսոփայելու մասերան տարբերնակ է, բայց բոս էյության շատ լավ է» (Մարքս և Ենգելս. Յերկեր, հատ. XXII, էջ 286): Ի պատասխան այդ նամակին, Մարքսը 1858 թ. հունվարի 11-ին հղորդում է. «Կլաուզելիցին յե մի փոքր թերթեցի Բլյուխերի կապակցությամբ: Այդ

սուբյեկտի մտ շատ կա սուղջ միտք (common sense), վորը մոտենում է սրամտության» (նույն տեղում, էջ 289):

Լենինը, զարգացնելով մարքսիզմի ուսմունքը պատերազմի մասին և մերկացնելով իմպերիալիստական պատերազմի պաշտպանությունը Ը Ինտերնացիոնալի սոցիալ-շովինիստների կողմից, անում է հետևյալ հետևությունը. պատերազմը չի ներկայացնում «հասարակության բնական վիճակը», հավիտյան և անհաղթանարելի մի յերևույթ,—ընդհակառակը, նա պատմական և անցողիկ յերևույթ է: Պատերազմը, աշխատավոր մասսաների համար այդ մեծագույն չարիքը, կարող է և պետք է վոչնչացվի: Բայց այդ հնարավոր է ըուրժուազիայի տապալման և դասակարգային հասարակությունը անդասակարգ կոմունիստական հասարակության փոխակերպելու հետևանքով միայն: «Միայն այն բանից հետո, յերբ մենք կտապալենք, վերջնականապես կհաղթենք և երազրուպրիացիայի կենթարկենք բուրժուազիային ամբողջ աշխարհում, և վոչ թե միայն մեկ յերկրում, պատերազմները կդառնան անհնարին» (Յերկեր, հատ. XIX, էջ 325):

Մարքսիզմ-լենինիզմը միշտ համարել է բարբարոս, անարդարացի այն պատերազմները, վոր մղել և մղում են իմպերիալիստներն այլ ազգերի ու ժողովուրդների դեմ, նրանց ճնշելու և կեղեքելու նպատակով: Յեմ ընդհակառակը, նա միշտ արդարացի և որինական է համարել ճնշված ու զաղրվածային ժողովուրդների ազգային-ազատագրական պրոգրեսիվ պատերազմները, աշխատավորների հեղափոխական պատերազմները ընդդեմ շահագործողների:

«Բոլշևիկները դեմ էլին վոչ ամեն տեսակ պատերազմի: Նրանք դեմ էլին միմիայն հափշտակողական, իմպերիալիստական պատերազմի: Բոլշևիկները դառնում են այն, վոր պատերազմը յերկու տեսակ է լինում՝ ա) արդարացի, վոչ-հափշտակողական, ազատագրական պատերազմ, վորի նպատակն է կամ պաշտպանել ժողովրդին արտաքին հարձակումից և նրան ստրկացնելու փորձերից, կամ ազատագրել ժողովրդին կապիտալիզմի ստրկությունից, կամ, վերջապես, ազատել զաղութներն ու կախյալ յերկրներն իմպերիալիստների լծից, և բ) անարդարացի, հափշտակողական պատերազմ, վորի նպատակն է՝ զավթել և ստրկացնել ուրիշ յերկրներ, ուրիշ ժողովուրդներ» («Համ Կ(բ)Կ պատմություն: Համառոտ դասընթաց», հայերեն, էջ 226):

Լենինն իր «Պրոլետարական հեղափոխության ռազմական ծրագիրը» հոդվածի մեջ գրել է.

«... Մեկ յերկրում հաղթանակած սոցիալիզմը բնավ էլ միանգամից հենց չի բացառում առհասարակ բոլոր պատերազմները: Ընդհակառակը, այն դրանք յենթադրում է, հասարակության զարգացումը տարբեր յերկրներում կատարվում է ծայր աստիճան անհավասարաչափորեն: Այլ կերպ չի էլ կարող լինել ապրանքային արտադրության պայմաններում: Այստեղից բխում է անխախտ յեղրակացություն՝ սոցիալիզմը չի կարող հաղթել բաւար յերկրներում միաժամանակ: Նա կհաղթի օկզբում մեկ կամ միքանի յերկրներում, իսկ մնացածները վորոշ ժամանակվա ընթացքում կմնան բուրժուական կամ մինչբուրժուական: Այդ պետք է առաջ բերի մյուս յերկրների բուրժուազիայի վոչ միայն բաղխումները, այլև ուղղակի ձգտումը՝ ջանջախելու սոցիալիստական պետության հաղթատար (победоносный) պրոլետարիատին: Այդ դեպքերում պատերազմը մեր կողմից որինական և արդարացի կլինի: Իսկ կլինի պատերազմ սոցիալիզմի համար, մյուս ժողովուրդներին բուրժուազիայից ազատագրելու համար» (Յերկեր, հատ. XIX, էջ 324—325):

Հաղթանակած պրոլետարիատը, սոցիալիստական պետությունը, մատնանշում էր Լենինը, կկանգնի դեմ-հանդիման կապիտալիստական շրջապատմանը, և քանի վերջինս զոյություն ունի—բոլշևիկների հիմնական լուռնը պետք է լինի վոչ թե զինաթափումը, այլ «պրոլետարիատի զինումը նրա համար, վորպեսզի հաղթել, եքսպրոպրիացիայի յենթարկել և զինաթափ անել բուրժուազիային» (Յերկեր, հատ. XIX, էջ 326):

Հենվելով Լենինի այս տեսական դրույթների վրա, վորոնք այնուհետև զարգացվեցին ընկեր Ստալինի կողմից, Խորհրդային Միությունը ստեղծեց հզոր և անպարտելի Բանվոր-Ֆյուզացիական Կարմիր Բանակ, վորը «վորպես արթուն ժամապահ, կանգնած է սոցիալիստական աշխարհը ճնշման, բռնության և կապիտալիստական բարբարոսության աշխարհից բաժանող սահմանագծերի վրա: Նա միշտ, ամեն մի բույս պատրաստ է մարտի նետվելու ընդդեմ ամեն մի թշնամու, վորը կհամարձակվի դիպչել Խորհրդային պետության սրբազան հողին» (Կ. Վորոշիլով, ճառ Համ Կ(բ) Կ XVIII համագումարում): Ունենալով հզոր Կարմիր Բանակ և Ռազմա-Մովային Կարմիր Նավատորմ, վորոնք պաշտպանում են սոցիալիստական հասարակության խաղաղ աշխատանքը, Խորհրդային Միությունը ընկեր Ստալինի բերանով հայտարարում է. «Մենք չենք վախենում ագրեսորների օպառ-

նալիքներից և պատրաստ ենք կրկնակի հարվածով պատասխանելու պատերազմի հրձիգների հարվածին, վորոնք փորձում են խախտել Խորհրդային սահմանների անձեռնմխելիությունը» (Ի. Ստալին, Հաշվետու զեկուցում կուսակցության XVIII համագումարում՝ Համ. Կ(բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին):

\* \* \*

Լենինի քաղվածքները և դիտողությունները Կլաուզելիցի՝ պատերազմի մասին յերկերի վերաբերյալ, վորոնք պռաջին անգամ հրատարակվել են 1930 թվին՝ XII «Լենինյան ժողովածվում», հրատարակվում են նորից համեմատված և ուղղված թարգմանություններով:

Լենինի ընդգծումները Կլաուզելիցից կատարված քաղվածքների մեջ տրվում են շեղագրով, մեկ ընդգծումը—շեղագրով, յերկուսը ընդգծումը—ցրիվ շեղագրով, յերեք ընդգծումը—կիսաքավ ցրիվ ցեղագրով: Այն բառերը, վորոնք Լենինը գրել և խոշոր, տրվում են ցրված: Լուսանցքներում կատարված գծանշումները համապատասխանում են Լենինի կատարածներին:

Եջերն ըստ 1832—1834 թ. թ. գերմաներեն հրատարակության նշելու հետ միաժամանակ, վորից ուղտվել և Լենինը, մենք քաղվածքների եջերի համարակալումը տալիս ենք նաև ըստ Կլաուզելիցի յերկերի՝ ԽՍՀՄ ՊԺԿ Պետդինհրատի 4-րդ հրատարակության, Մոսկվա, 1937 թ., հատ. I և II: Գծի առջևից նշանակված առաջին թիվը համապատասխանում և եջերի լենինյան նշմանը, յերկրորդը՝ ուղտական հրատարակությանը:

Տողատակի ծանոթագրությունները պատկանում են խմբագրությանը:

1939 Մարտ

Համ. Կ(բ)Կ Կենտկոմի կից Մարտի—Ենգելի—Լենինի Ինստիտուտ:

## ԿԵՆՍՍ.ԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ ԿԼԱՈՒԶԵՎԻՅԻ ՄԱՍԻՆ

«Համընդհանուր գերմանական կենսագրությունից»<sup>1</sup> (հատ. IV): Կլաուզելից. 1780—1831: «Բեռլինում Կլաուզելիցը պատերազմին հաջորդող տարիներին» (այսինքն՝ 1806 թ. հետո)<sup>2</sup> «լուսում եր պրոֆեսոր Կիզելետտերի փելիսոփայությունից հատարությունները, վորոնց նա հետևում եր կենդանի հետաքրքրություններով: Կիզելետտերի դիալեկտիկական մեթոդի հետքերը կարելի յե նաև գտնել այն յեղանակի մեջ, վորով Կլաուզելիցն իր մտքերը զարգացնում և իր զուտ տեսական աշխատություններում» (Եջ 286):

(( = կանտական ))

<sup>1</sup> Տեղեկությունները վերցված են «Համընդհանուր գերմանական կենսագրությունից» — «Allgemeine Deutsche Biographie» — Գիտությունների Ակադեմիայի Պատմական հանձնաժողովի հրատարակություն՝ Մյունխենում, 56 հատոր (1875—1912 թ. թ.), վորը պարունակում և գերմանական գանազան գործիչների կենսագրությունները:

<sup>2</sup> Խոսքը վերաբերում և Ֆրանսիայի և Պրուսիայի միջև 1806 թ. տեղի ունեցած պատերազմին:

ԳԵՆԵՐԱԼ ԿԱՐԼ ՔՈՆ ԿԼԱՌՆՉԵՎԻՑԻ ՀԵՏՄԱՀՎԱՆ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄ-  
ՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ<sup>1</sup>

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ: ՀԱՏՈՐ I

ԲԵՌԼԻՆ: 1832

Եջ XVI/23<sup>2</sup>: «Պատերազմը վոչ այլ  
ինչ է, բայց միայն պետական քաղաքակա-  
նութիւնը, վորը շարունակվում է այլ մի-  
ջոցներով»...

Եջ 28/54. (§ 24. — Առաջին գլուխ:  
«Ի՞նչ է պատերազմը». — Առաջին գիրք. «Պա-  
տերազմի բնութիւն մասին»):

«24. Պատերազմը պարզապես քաղաքա-  
կանութեան շարունակութիւնն է՝ այլ մի-  
ջոցներով:

«Յե՛վ այսպես, մենք տեսնում ենք, վոր  
պատերազմը վոչ միայն քաղաքական ակտ  
է, այլ և քաղաքականութեան իսկական  
գործիք, քաղաքական հարաբերութիւնների  
շարունակութիւնը, դրանց իրականացումն  
այլ միջոցներով: Այն յուրահատուկը, վոր  
դեռևս մնում է նրա մեջ, վերաբերում է մի-  
այն նրա միջոցների յուրահատուկութեանը:  
Ռազմական արվեստն ամբողջութեամբ և  
զորավարը յուրաքանչյուր առանձին դեպ-  
քում իրավունք ունի պահանջելու, վոր-  
պեսզի քաղաքականութեան ուղղութիւնը  
և մտադրութիւնները հակառակութեան մեջ

<sup>1</sup> Կլաուզեվիցի աշխատութիւնները նրա մահից հետո հրատարակել է նրա  
կինը:  
<sup>2</sup> Բեռլինի թարգմանութեան I հատոր, 1937 թ.:

չմտնեն ռազմական մեթոդների հետ: Այդ  
պահանջը բնավ էլ աննշան չէ. բայց վոր-  
քան էլ զորավարն առանձին դեպքերում  
ներգործի քաղաքական մտադրութիւնների  
վրա, այդ ներգործութիւնը պետք է դիտել  
միայն վորպես դրանց կերպարանափոխում,  
վորովհետև քաղաքական մտադրութիւնը  
նպատակ է հանդիսանում, մինչդեռ պատե-  
րազմը միայն միջոց է, իսկ միջոցը յերբեք  
չի կարելի պատկերացնել առանց նպատա-  
կի» (ամբողջ § 24-ը):

որյակտիվի և  
սուբյեկտիվի  
բաժանման  
(առանձնաց-  
ման)  
«կիրքը

Եջ 29/55... «Բայց ընթերցողի մեջ սխալ  
պատկերացումներ ստեղծելուց խուսափելու  
համար մենք պետք է այստեղ նշենք, վոր  
պատերազմի այդ բնական տեղիքների տակ  
մենք հասկանում ենք միայն փիլիսոփա-  
յական, զուտ արամաբանական տեսչենց,  
և վոչ թէ քաղխման մեջ գտնվող իսկական  
ուժերի տեսչենցը, դրա տակ չպետք է հաս-  
կանալ, որինակ, ճակատամարտիների բու-  
րը հոգևոր ուժերն ու կրքերը»...

[[ Մրանից առաջ Կլաուզեվիցը խոսում  
էր այն մասին, վոր «վորքան ավելի վիթ-  
լարի յին պատերազմի մոտիվները, վոր-  
քան ավելի յին նրանք ընդգրկում ժողո-  
վուրդների ամբողջ կեցութիւնը՝ das ganze  
Dasein» (Եջ 28/54), — «այնքան ավելի յի  
համընկնում ռազմական նպատակը, Ziel, և  
պատերազմի քաղաքական որյակտը, Zweck»,  
«այնքան ավելի յի պատերազմը թվում  
զուտ ռազմական, պակաս չափով քաղա-  
քական»: Վորքան ավելի թույլ են պատե-  
րազմի մոտիվները և «լարվածութիւնը»,  
«այնքան ավելի պակաս չափով ռազմական  
տարրի բնական ուղղութիւնը, այսինքն  
բնութիւնը համընկնելու յի այն գծին, վոր  
թեպաղում է քաղաքականութեանը, հետևա-  
պես, պատերազմը այնքան ավելի յի շեղ-

ընդգծումն

ինն և

վերու իր ընական ուղղությունից, այնքան  
ավելի / քաղաքական որչեղար տարրերովե-  
լու յե ի դե ա լ ա կ ա ն պատերազմի նպա-  
տակից, այնքան ավելի քաղաքական կթվա  
պատերազմը» (եջ 28—29 54—55):

Այդ NB. թվացողությունը դեռ իրա-  
կան ու թյունն չէ: Պատերազմը թվում է  
այնքան ավելի «ուղմական», վորքան  
նա ավելի խորը կերպով քաղաքական է.—  
այնքան ավելի «քաղաքական», վորքան նա  
ավելի պակաս չափով խորը քաղաքական է ॥

...«Յեվ այսպես, վերադառնալով գլխա-  
վորին, յեթե ձեռն և, վոր պատերազմի մեկ  
տեսակի դեպքում քաղաքականությունը  
կարծեք թե միանգամայն անհետանում է,  
մինչդեռ մյուս տեսակի դեպքում—հանդես  
է գալիս չափազանց վորոշակի, ապա այնու-  
ամենայնիվ կարելի յե պնդել, վոր պատե-  
րազմի առաջին տեսակը հանդիսանում է  
նույն չափով քաղաքական, ինչպես վոր  
մյուսը» (եջ 29/56):

(§ 27. էջ 30/56):

«Յեվ այսպես, մենք տեսնում ենք վոր,  
նախ՝ վոչ մի պայմանով մենք չպետք է  
պատերազմը հասկանանք վորպես ինքնու-  
րույն ինչ-վոր մի բան, այլ պետք է այն դի-  
տենք վորպես քաղաքականության գործիք.  
միայն այսպիսի պատկերացման դեպքում  
հնարավոր է խուսափել հակասությունից  
ամբողջ ուղմական պատմության մեջ: Մի-  
այն այսպիսի պատկերացման դեպքումն է  
այդ մեծ գերքը մատչելի դառնում բանա-  
կան ըմբռնմանը: Յերկրորդ՝ հենց այդպիսի  
ըմբռնումն է մեզ ցույց տալիս, թե վորքան  
տարբեր պետք է լինեն պատերազմներն ըստ  
իրենց մոտիվների և այն հանգամանքների  
ընդթի, վորոնցից նրանք ծնունդ են առ-  
նում» (եջ 30/56):

NB

NB

«Յեվ այսպես, պատերազմը լինում է  
վոչ միայն իսկական մի քամելուն, քանի  
վոր նա յուրաքանչյուր կոնկրետ դեպքում  
վորոշ չափով փոխում է իր բնույթը, այլ  
նաև իր ընդհանուր գրականությունների մեջ,  
նրանում տիրապետող տենդենցների նկատ-  
մամբ, նա իրենից ներկայացնում է յուրատե-  
սակ մի յերրորդություն, կազմված՝ բնու-  
թյունից, վորպես իր սկզբնական տարրից,  
ատկությունից ու թշնամանքից, վորոնք  
պետք է դիտել վորպես բնական կույր ին-  
տիկլա: հավանականությունների ու պա-  
տահականությունների խաղից, վորն այն  
գարձնում է հոգեկան ազատ գործունեյու-  
րյուն. քաղաքականությանն իբրև մի գոր-  
ծիք՝ նրա յենթարկվածությունից, վորի  
շնորհիվ նա դառնում է անմիջականորեն  
դատադուքյան սեփականությունը:

NB

Այս յերեք կողմերից առաջինն ավելի  
ուղղված է դեպի ժողովուրդը, յերկրոր-  
դը՝ զորավարին ու նրա զորքին, իսկ յեր-  
րորդը՝ կառավարությանը» (եջ 31/57):

Շատ դիպուկ է ասված պատերազմի  
քաղաքական հոգու, եյության, բովանդա-  
կության և «ժողովրդական» արտաքինի  
մասին:

«Նպատակը և միջոցը պատերազմի մեջ»  
(գիրք Լ գլուխ II)—վոչնչացնել մարտական  
ուժը,—նվաճել յերկիրը, վորպեսզի՞. վոր-  
պեսզի թշնամու կամքը ընկճվի և նա հա-  
մաձայնվի հաշտություն տորազրել:

...«հաշտություն նքելիս յուրաքանչյուր  
անգամ մարում են բազմաթիվ կայծեր,  
վորոնք կշարունակելին գաղտնաբար մար-  
մանդ այրվել, յերկու կողմերի էլ լարվա-  
ծությունը թուլանում է, վորովհետև հաշ-



NE  
ճիշտ է:

տուժյան հակումն ունեցող բոլոր մտքերը, իսկ այդպեսիք յուրաքանչյուր ժողովրդի մեջ և ամեն մի պարագայում քիչ չկան, — վերջնականապես հեռանում են դիմադրության գծից» (եջ 33—34/59)...

միայն  
«սակավ»

«Կռիվն սկզբնապես հանդիսանում է թշնամության զգացմունքների դրսևորում. ճիշտ է, մեր մեծ կռիվներում, վորոնց մենք անվանում ենք պատերազմ, թշնամական զգացմունքները հաճախ դաննում են միայն թշնամական մտադրություններ. սովորաբար մենք, համենայն դեպս առանձին մարդու մեջ՝ չենք դաննի ատելության զգացմունք դեպի առանձին, միայնակ յեզակի թշնամին: Այնուամենայնիվ, յերբեք՝ բանը չի անցնում առանց նման զգացմունքների: Ազգային ատելությունը, վորի պակասը մեր պատերազմներում ևս սակավ է զգացվում. ավելի կամ պակաս չափով փոխարինում է մեկ անհատի անձնական թշնամությանը՝ մյուսի նկատմամբ: Բայց այնտեղ, վորտեղ չկա նաև այդ ատելությունն ու սկզբնապես չի յեղել վորևէ գայրույթ, այնտեղ թշնամության զգացմունքը բռնկում է հենց պայքարի պրոցեսում: Այն բռնությունը, վոր վորևէ մեկը գործադրում է մեր նկատմամբ վերևից ստացվող հրամանի հիման վրա, մեր մեջ վրեժխնդրության ու հատուցման զգացմունք է բորբոքում ավելի շուտ, քան թե մեր զգացմունքները կուզովեն ընդգեմ այն իշխանության, վորը հրամայում է գործել մեր դեմ: Այդ մարդավարի յե կամ, յեթե կուզիք, գաղանաբար, բայց դա այդպես է» (եջ 121—122/126—127):

(...Ազգային ատելությունը կա  
ամեն մի պատերազմի մեջ...

«Պատերազմը մարդկային հարաբերությունների ակա է:

Յեվ այսպես, մենք ասում ենք, վոր պատերազմը չի վերաբերում արվեստների և գիտությունների բնագավառին, այլ հասարակական կյանքի բնագավառին: Պատերազմը նշանակելի շահերի ընդհարումն է, վորը լուծվում է արյունհեղությամբ, և միայն դրանով է այն տարբերվում հասարակական մյուս կոնֆլիկտներից: Պատերազմն ավելի շուտ կարելի յե համեմատել առևտրի, քան թե արվեստներից վորևէ մեկի հետ, առևտրի, վորը նույնպես մարդկային շահերի ու գործունեյությունների կոնֆլիկտ է հանդիսանում: Պատերազմին շատ ավելի (ընդգծումը կլուզեվիցիսն է) մոտիկ է քաղաքականությունը, վորը նույնպես կարելի յե դիտել վորպես յուրատեսակ առևտուր, ավելի մեծ մասշտաբով: Քաղաքականությունը, բացի դրանից, հանդիսանում է այն սուպրեզը, վորի մեջ զարգանում է պատերազմը. քաղաքականության մեջ քողարկված ձևով արդեն նշված են պատերազմի կոնտուրները, ինչպես վոր կենդանի եյակների հատկությունները նըշված են լինում նրանց սողմերի մեջ» (եջ 143/144):

NB

ի միջի  
այլոց՝

Եջ 184/176... Գեներալ Շարնհորստ, վորն իր «Ուղեցույցում»<sup>1</sup> բարեից լավ է գրել իսկական պատերազմի մասին... (եջ 184/176):

<sup>1</sup> Տես՝ Scharnhorst Gerhard (1755—1813): «Militärisches Taschenbuch für den Gebrauch im Felde: 1792» («Ռազմական ծոցազրբույկ գաշտում գործածելու համար: Թարգմ. գերմ. 1798 թ., Մոսկվա) և «Handbuch der Artillerie» («Հրետանու ուսումնասիրման ձեռնարկ», Թարգ. գերմաներենից, մասն I, II և III, Պետերբուրգ, 1850, 1851 թ. թ.):

5-րդ գլխում («Ձորքի զինվորական առաքինությունը (քաջարիությունը)») զերբ

III—ստրատեգիայի մասին առհասարակ, կլաուզեվիցյն ի միջի այլոց ասում է.

...«Վորքան ել ջանասիրությամբ մենք ձգտենք հանձին միևնույն անհատի պատրաստել քաղաքացու և ռազմիկի, ինչպիսի համազգային ընույթ ել վոր ընդունի պատերազմը, և վորքան ել նա հեռուն գնա կոնդույթների նախկին պատերազմներին հակառակ ուղղությամբ,—այնուամենայնիվ յերբեք չի կարելի վերացնել ռազմական գործի պրոֆեսիոնալ յուրահատկությունը: Իսկ յեթե այդ այդպես է, ապա նրանք, ովքեր զբաղվում են ռազմական գործով և քանի զեռ նրանք զբաղվում են զբանով, իրենց կդիտեն վորպես յուրատեսակ կորպորացիա, վորի կարգերի, որենքների և սովորությունների մեջ զերազանցապես ֆիքսացիայի յե յենթարկվում հենց պատերազմի վողին: Իրականում դա այդպես ել կա: Ուստի, վորքան ել ձգտենք պատերազմը զիտել բարձրագույն անասկետից, չափազանց սխալ կլիներ թերագնահատել այդ կորպորատիվ վողին (Esprit de Gorps), վորն ավելի կամ պակաս չափով կարող է, և պետք է հատուկ լինի գործերին» (եջ 216/200):

Գլ. VI — «Համարձակություն» — նույն այդ III գրքում. —

...«Ձգույ՞ մարդկանց ամբողջ մասայի մեջ կա մի նշանակելի մեծամասնություն, վորոնք այդպիսին են վախկոտությունից... (եջ 222/204):

...«Նույնիսկ անմիտ համարձակությունը, այսինքն՝ աննպատակ համարձակու-

զգուշություն և վախկոտություն

619 55

թյունը՝ չի կարելի թերագնահատել: Իր հիմունքում դա նույն այդ հոգեկան ուժն է, վորը սակայն դրսևորվում է հատուկ տեսակի կրքի ձևով, առանց բանականության վորևե մասնակցության: Միայն այնտեղ, վորտեղ անմիտ համարձակությունն ապրատամբում է հնազանդության դեմ, ...այնտեղ նա չարիք է... (եջ 222/205):

...«Վոր միևնույն չափով գործն իմանալու դեպքում պատերազմի ժամանակ հաղաբապատիկ շատ բան կարող է փչացվել անվճռականության հետևանքով, քան թե համարձակության,—բավական է ասել այդ, վորպեսզի հավատացած լինել, վոր հավանության կարժանանանք մեր ընթերցողների կողմից»... (եջ 223/205):

«Ինչպե՞ս հոգեկան ուժերը կորցնում են իրենց հզորության նշանակելի մտքը, յերբ առաջի պլանն են դուրս գալիս զգաստ մտածողությունները, կամ թե յերբ սկսում է զերակշռել դատողությունը: Այդ պատճառով ել համարձակության մենք հանդիպում ենք այնքան ավելի սակավ, վորքան ավելի յեմք մեմք բարձրացում բստ ռանգի. չե վոր յեթե նույնիսկ հատկացողության և մտքի մակարդակը չբարձրանա ել՝ ռանգի հետ միասին, ապա այնուամենայնիվ զինվորական առաջնորդների վզին, նրանց զանազան պոստերում որչեկախիվ մեծուքյունները, հաճախմանները և հաշիվները դրոից փաթաթվում են այնպիսի մեծ քանակությամբ և այնպիսի ուժով, վոր նրանք դրանցով ծանրաբեռնված են այնքան ավելի, վորքան պակաս չափով են նրանք իվիմակի դատելու դրանց մասին ինքնուրույն կերպով» (եջ 223/206: Ընդգծումը կլաուզեվիցյնն է):

NB

...«Վորքան ավելի յենք մենք բարձրանում ղեկավարութեան աստիճաններով, գործունեութեան մեջ այնքան ավելի գերակշռութուն են ստանում միտքը, բանականութունը և խոհեմութունը. այնքան ավելի յե յերկրորդ պլանը մղվում համարձակութունը, վորը տեմպերամենտի հատկութունն է: Այդ պատճառով էլ մենք նրան այդպես սակավ ենք հանդիպում բարձրագույն պոստերում, բայց դրա փոխարեն նա այդ ժամանակ ավելի ևս արժանի յե լինում հիացմունքի» (Եջ 225|207):

Վերջ I հատորի

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ: Հատ. II  
(Բեռլին 1833)

...«Յեթե այդ եներգիային<sup>1</sup> զուգակցվում է իմաստուն չափավորութունը նշվող նպատակների մեջ, այն ժամանակ առաջ է գալիս փայլուն հարվածների և զգուշ զբոսվածութեան խաղ, վորը մեզ այնքան զարմացնում եր Ֆրիդրիխ Մեծի պատերազմներում» (Եջ 10|330)...

...«Նեղվածն... իր վերջին հույսն ամբողջութեամբ գնելու յե բարոյական գերակշռութեան վրա, վոր յուրաքանչյուր խիզախ մարդու տալիս է հուսահատութունը:

<sup>1</sup> Մեջբերված բառերին Նյուտոնի վեցը նախադրում է հետևյալ պարբերութունը.  
«Վորքան ավելի մեծ է այն կողմի ուժերի պակասը, վորը զբավիչ է անհավասար պայքարի մեջ, վտանգի ճնշման տակ, այնքան ավելի պետք է ուժեղանան նրանց ներքին լարումն ու յետանդը: Իսկ այնտեղ, վորտեղ նկատվում է հակառակ յերևույթ, վորտեղ հերոսական հույսահատութեան փոխարեն վրայն համնում փոքրորդութեան նուսալումը, այնտեղ, իհարկե, ազդակուն արժեան անկիւք չունի» (հատ. I, Եջ 330 սուս. թարգմանութ.):»

«վերակենդանացման իրավունք»  
(պարտվածի):

խիզ ալժմ

հնահն  
որամիտ է

«մեծ մասամբ»  
NB

Մայրահեղ համարձակութունը նա դիտելու յե վորպես բարձրագույն իմաստութուն, ծայրահեղ ղեկավարում նա կրիմի հանդուգն խորամանկութեան և, յեթե նրան վիճակված չե հաջողութուն ունենալ—նա կործանման մեջ պատվով ձեռք կբերի ապագա վերակենդանացման իրավունքը» (Եջ 11|330):

«...Սովորական պրակտիկայի համաձայն, 150 ձիուց բաղկացած եսկադրոնը, 800 մարդուց կազմված դումարտակը և 8 վեցֆուտանոց թնդանոթներից բաղկացած մարտիցը հանդիսանում են իրենց արժեքի տեսակետից մոտավորապես հավասար մեծութուններ»... (Եջ 15|334):

...«Պատերազմը գոյութուն ունի. ավելի շատ՝ պաշտպանվողի, քան թե նվաճողի համար. չէ՞ վոր միայն հարձակումն է առաջացնում պաշտպանութուն և դրա հետ միասին պատերազմ: Նվաճողը միշտ խաղաղասեր է (ինչպես վոր դա միշտ էլ պնդում եր Բոնապարտը): Նա ավելի հաճույքով կգերադասեր խաղաղ ճանապարհով զբավել մեր պետութեան սահմանները. իսկ վորպեսզի նա այդ բանն անել չկարողանա, մենք պետք է պատերազմ ուղենք և, հետևապես, նախապատրաստվենք դրան»... (Եջ 166—167|24)<sup>1</sup>:

...«Թեև պատերազմական գործողութունների ազդման մի առանձին բնակչի ազդեցութունը պատերազմի բնթացքի վրա մեծ մասամբ նկատելի յե վոչ ավելի, քան մի կաթիլ ջրի ազդեցութունն է ամբողջ հորձանքի կազմի մեջ, այնուամենայնիվ, նույնիսկ այն ղեկավարում, յերբ չի կարելի

<sup>1</sup> Այստեղից տես սուս. հրատարակութ. II հատորը:

«նույնիսկ առանց  
ապստամբութեան»

խոսել վորևե ժողովրդական ապստամբու-  
թեան մասին, այն ընդհանուր ազդեցութե-  
անը, վոր յերկրի բնակիչներն ունեն պատե-  
րազմի վրա, չափազանց նշանակելի յե»...  
(Եջ 170|26—27):

( Իբր թե հատկապես (որինակ) — բանակի  
իրազեկութեանը (Եջ 170—171|27):

«Ով ծիծաղում է այս դատողութեան-  
ների վրա» (քաղաքական հավասարակշռու-  
թեան մասին և այլն), «վորպես ուտոպիս-  
տական յերազմների, նա մեղք է գործում  
փիլիսոփայական ճշմարտութեան դեմ: Յե-  
թե վերջինս մեզ հնարավորութեան է տա-  
լիս ճանաչելու այն հարաբերութեանները,  
վորոնց մեջ իրերի եյական տարրերը դի-  
մակայում են մեկը մյուսին, ապա, իհարկե,  
չմտածված բան կլինեն, աչքաթող անելով  
բոլոր պատահական ազդեցութեանները,  
այստեղից հանել այնպիսի որենքներ, վո-  
րոնց հիմունքով կարելի յե կարգավորել  
յուրաքանչյուր առանձին դեպք: Բայց նա,  
ով, մեծ գրողի բառերով ասած, չի կարողա-  
նում բարձրանալ անեկդոտների մակար-  
դակից, ավ վոր միայն դրանցից է կառու-  
ցում ամբողջ պատմութեանը, ամեն տեղ  
սկսում է ամենաանհատականից, իրադար-  
ձութեանների զազաթնակետից, և առար-  
կայի մեջ խորանում է միայն այնքանով,  
վորքանով վոր նա այդ բանի համար  
գտնում է այս կամ այն առիթը, յերբեք,  
հետևապես, չհասնելով մինչև իշխող, ընդ-  
հանուր, հիմունքում ընկած հարաբերու-  
թեանները, — այդպիսի մարդու կարծիքը  
լավագույն դեպքում կարող է վորևե արժեք  
ունենալ միայն մի առանձին յերևույթի  
համար: Այն ամենը, ինչ վոր փիլիսոփա-  
յութեանը սահմանում է, վորպես ընդհա-

նուր հետևութեան մի շարք դեպքերի հա-  
մար, նրան պատկերանում է յերազմի պես»  
(Եջ 173—174|29—30)...

...«Այն ընդհանուր պայմանները, վո-  
րոնցից ծագում է պատերազմը, և վորոնք,  
բնականաբար, կազմում են նրա հիմունքը,  
ընտրողում են նաև նրա բնույթը. այդ մա-  
սին մենք շատ առիթ կունենանք խոսելու  
հետադայում, պատերազմի պլանը քննար-  
կելիս: Սակայն այդ ընդհանուր պայման-  
ները պատերազմների մեծամասնութեանը  
դարձրել են ինչ-վոր անորոշ մի բան-  
նրանցում թշնամութեան զգացմունքները,  
բառիս բուն իմաստով, պետք է իրենց հա-  
մար ճանապարհ բանային ընդհարվող հա-  
րաբերութեանների այնպիսի հանգույցի  
միջով, վոր գառնում է յին չափազանց թույլ  
ներգործող տարր» (Եջ 197|48):

NB

( և վոչ մի-  
այն պատե-  
րազմում

...«սուսկ տարամտորեն շռչափելով վնիւր  
(ընդդուումը հեղինակինն է), ինչպես վոր  
դեպքերի մեծ մասում կատարվում էլ է պա-  
տերազմում»... (Եջ 202/51):

...«Այդ բնագավառում բանը» (լեռների  
ազդեցութեանը պատերազմի վրա) «նույն-  
պես է, ինչպես վոր դիտարկեցի մեջ-  
առարկան վորոշ ուղղութեամբ հեռացնելիս  
պատկերն ավելի պայծառանում է, բայց  
վոչ այնքան, ինչքան ուղեք, այլ միայն  
մինչև ֆոկուսին հասնելը, վորից այն կողմ  
ամեն բան ստացվում է հակառակը» (Եջ  
279/114)...

(գետի այդպիսի պաշտպանութեանն էլ կա-  
րելի յե անվանել «ելեգանտ»... բայց)

արամիտ է

...«բայց քանի վոր ելեգանտությունը հեշտութեամբ վերածվում է թեթևադիտութեան, վորը պատերազմի մեջ չի ներվում այնպես հեշտութեամբ, ինչպես հասարակութեան մեջ, ապա այդպիսի ելեգանտութեան որինակները շատ հազվադեպ են» (Էջ 308/138)...

(( գիտելիկայի որինակ ))

NB

«ավելի վորոշակի ասվելի միակողմանի»...

...«Պրակտիկայում գործածվող, բայց, իհարկե, շատ անորոշ այն նշանակութեանից, վոր ունի «չերկրի բանալիքի» հասկացողութեանը իրենց ռազմական արշավանքների մասին գործավարների պատմածների մեջ, հարկավոր է անցնել—դրանից սխտեմ զարգացնելու ցանկութեան դեպքում,—այդ հարցի ավելի վորոշակի, հետևաբար, ավելի միակողմանի քննարկմանը»... (Էջ 334/160)...

(23-րդ գլուխ «Յերկրի բանալին»)

արամիտ է և խելամիտ

...«Մեծ մասամբ յերկրի լավագույն բանալին գտնվում է հակառակորդի գործի մեջ»... (Էջ 338/162)...

պատերազմների մեծամասնութեանը և զուտ դիտողութուն է

...«Պետք է նաև ընդունել, վոր պատերազմների և արշավանքների հսկայական մեծամասնութեանն ավելի մոտիկ են զուտ դիտողութեան վիճակի, քան թե կյանքի ու մահու մարտի, այսինքն՝ այնպիսի մարտի, վորի մեջ համենայն դեպս մի կողմը լուծում է փնտռում» (Էջ 392/207)...

...«Տեղագրական տարրի գերակշռող կարևորութեան շնորհիվ գիտութեան այն ճյուղը, վորը կապված է նրա հետ, և գլխավոր շտաբի գործունեությունը, վոր ընդունված է համարել նրան ամենից ավելի հատուկ, առանձնակի ուշադրութուն

գլխավոր շտաբը = գործի այն մասն է, վորն ամենից ավելի գրում և տպում է:

են գրավում: Իսկ քանի վոր գլխավոր շտաբը սովորաբար հանդիսանում է գործի այն մասը, վորն ամենից ավելի գրում և տպում է, ապա այստեղից ել ստացվել է, վոր արշավանքների այդ կողմը պատմականորեն ամենից ավելի յե ֆիքսացիայի յենթարկվում. միևնույն ժամանակ բավականաչափ բնական հակումն է առաջ գալիս սխտեմատիկացիայի յենթարկելու հենց այդ և մեկ դեպքի պատմական լուծումից ընդհանրացնող հետևություններ անելու հաջորդների համար: Բայց այդ ապարդյուն և կեղծ ձգտում է: Պատերազմ վարելու նույնիսկ այդպիսի, ավելի պատիվ, տեղավայրի հետ ավելի կապված յեղանակի պայմաններում՝ յուրաքանչյուր դեպք տարբերվում է մյուսից և պահանջում է այլ մոտեցում: Ամենալավագույն մեմուարները, վորոնք դատողութուններ են պարունակում այդպիսի բաների մասին, կարող են միայն ծանոթացնել մեզ դրանց հետ, բայց բնավ չեն կարող դիտվել վորպես պատվիրազրեր: Դրանք, իսկապես, դառնում են ռազմական պատմություն, վորը մեկնաբանում է այդ պատերազմների միայն սպեցիֆիկ կողմը: «Վորքան ել վոր անհրաժեշտ է և արժանի յե հարգանքի գլխավոր շտաբի այդ գործունեությունը, վոր մենք այստեղ հանրաձանաչ հայացքով բնորոշեցինք վորպես նրան ամենից ավելի հատուկ, այնուամենայնիվ մենք պետք է նախադրուշացնենք ուղուրպացիայից, վոր հաճախ բղխում է նրա այդ գործունեությունից՝ ի վրաս ամբողջի: Այն նշանակութունը, վոր ձեռք են բերում շտաբների այն պետերը, վորոնք առավել ուժեղն են դիտվողական ծառայութեան

1 Զգալից պաշտպանութեան պայմաններում:

«շտաբային  
նեղմտություն»

այդ բնագավառում, հաճախ նրանց տալիս  
ե վորոշ ընդհանուր իշխանություն մտքերի  
և ամենից առաջ իրեն իսկ՝ զորավարի  
նկատմամբ: Այստեղից ել առաջ ե գալիս  
միակողմանի մտածողության սովորություն-  
նը»... (եջ 428—429|237—238)...

լավ առաջնորդ...  
և անվստահու-  
թյուն մարդկանց  
նկատմամբ

...«Առանց հրամայողական իշխող կամ-  
քի, վորն իր ազդեցությունը տարա-  
ծում ե ընդհուպ մինչև վերջին ողակը,  
անհնարին ե զորքի լավ ղեկավարումը, ե  
նա, ով կուզի հետևել մարդկանց միշտ  
վստահելու ու մարդկանցից ամենալավ-  
գույնը սպասելու սովորությանը, արդեն  
զբանտով իսկ միանգամայն անընդունակ  
կդառնա զորքի լավ ղեկավարման համար»  
(եջ 437—438|245)...

անհետանում ե  
տարբերությունը  
պաշտպանության  
և հարձակման միջև

...«Մեկ անգամ ես աչքի անցկացնելով  
ամբողջ ասվածքը, մենք պետք ե նկատենք,  
վոր այդչափ թույլ հարձակողական վոգու-  
վերջնական վճիռ վորոնելու ուղղությամբ  
յերկու կողմերի այդչափ աննշան ձգտման,  
այդչափ թույլ պողիտիվ ստիմուլներին, այդ-  
պիսի քանակությամբ ներքին դիմադրու-  
թյունների պայմաններում, վորոնք արգե-  
լակում ե կասեցնում են վճիռը, ինչպես  
այդ մենք այստեղ մեզ պատկերացնում ենք,  
եյական տարբերությունը հարձակման ե  
պաշտպանության միջև պետք ե ավելի ու  
ավելի անհետանա: Արդավի սկզբում հակա-  
ռակորդներից մեկը, իհարկե, կմտնի մյուսի  
տերիտորիան, ե դրա շնորհիվ նրա զործո-  
ղությունները վորոշ չափով կընդունեն  
հարձակման բնույթ. սակայն կարող ե հեշ-  
տությամբ պատահել, ե դա շատ հաճախ  
պատահում ե, վոր մյուսը շուտով իր բոլոր  
ուժերը կգործադրի, վորպեսզի ուրիշի հողի  
վրա պաշտպանի իր հողը: Այդպես յերկու  
հակառակորդները կկանգնեն միմյանց դեմ-

ուրիշի հողի վրա  
պաշտպանել իր  
հողը

հանդիման ըստ եյության փոխադարձ հրա-  
կողության վիճակում. յերկուսով ել դգառտ՝  
վորպեսզի վոչինչ չկորցնեն, գուցե յերկու-  
սով ել նույնպես հավասարաչափ հույս  
ունենալով շահողը լինել: Կարող ե պատա-  
հել, ինչպես վոր այդ յեղավ Յրիդրիս Մեծի  
հետ, վոր պաշտպանվողն այդ մտադրու-  
թյամբ նույնիսկ գերազանցում ե իր հա-  
կառակորդից»... (եջ 443—444|250)...

...«Ստրատեգիական մանեվրման այդ  
կողմն ել հենց առիթ ե ավել մանեվրմանն  
ամբողջությամբ վերագրել այն վոչ-ճիշտ  
նշանակությունը, վորի մասին մենք վե-  
րևում խոսեցինք: Նախ այդ հմտությունը  
նույնացրել են զորավարի մտավոր արժեքի  
հետ՝ առհասարակ: Բայց դա մեծ սխալ ե,  
քանի վոր, ինչպես արդեն ասվել ե, չի  
կարելի ժխտել, վոր խոշոր վճիռներ ընդու-  
նելու պահին զորավարի բարոյական ժշուտ  
հատկությունները կարող են լինել հանգա-  
մանքների ուժի նկատմամբ ավելի իշխող:  
Յեթե այդ իշխանությունը հանդիսանում  
ել ե ավելի շուտ ուժեղ զարգացած ինտու-  
իցիայի ե հոգեկան սթափման այն բունկում-  
ների արդյունքը, վորոնք առաջ են գալիս  
համարյա թե յենթադիտակցաբար, ե վոչ թե  
իրև արդյունք մտահետևությունների  
յերկար շղթայի, այնուամենայնիվ դա այդ  
հիման վրա չի հանդիսանում ռազմական  
արվեստի բնագավառում պակաս չափով  
լիաիրավ: Չե վոր ռազմական արվեստը չի  
հանդիսանում միայն բանականության  
գործունեյություն, ինչպես ե հավասարա-  
պես բանականության գործունեյությունը  
ռազմական արվեստի մեջ չի հանդիսանում  
ամենազլխավորը: Յերկրորդ՝ յենթադրում  
եյին, թե այս կամ այն կամպանիայի ան-

հաջողութիւնը անպայման կախված է այդ  
ընագավառում զորավարի, կամ նույնիսկ  
յերկու զորավարների պատրաստութեան  
աստիճանից, մինչդեռ իրականում այդպիսի  
անհաջողութեան գլխավոր և ընդհանուր  
հիմքը միշտ յեղել են այն ընդհանուր պայ-  
մանները, վորոնք պատերազմը վերածում  
էյին յուրատեսակ մի խաղի» (Եջ 446—  
447/252—253)...

պատերազմը = խաղ

(պատրաստագիտական մանյովրները և այլն)  
այդ խաղը համարում էյին «(ազգա-  
կան) արվեստի զագաթնակետ»  
(Եջ 447/253):

Հեղափոխում  
Ֆրանսական  
հեղափոխութիւն

«Այս հայացքը ֆրանսական հեղափո-  
խական պատերազմների նախորդակին ան-  
սարանների մեջ բավականաչափ տարած-  
ված էր: Այդ պատերազմները հենց միան-  
գամից բաց արին ազգական յերևույթնե-  
րի միանգամայն այլ աշխարհ: Իրանք  
սկզբնապես մի փոքր կոպիտ էյին ու ան-  
տաշ, բայց հետագայում, Բոնապարտի որով  
վորպես հիանալի մեթոդ սիստեմատիզա-  
ցիայի յինթարկված՝ հասցրին այնպիսի  
հաջողութիւններ, վորոնք համընդհանուր  
զարմանք առաջացրին. այդ ժամանակ  
հրաժարվեցին հին որինակներից, սկսեցին  
մտածել, վոր այդ ամենը հետևանք է նոր  
հայտնագործութիւնների, լավ գաղափար-  
ների և այլն, բայց, իհարկէ, նաև հասա-  
րակական պայմանների մեջ առաջացած  
փոփոխութիւնների. սկսեցին մտածել, վոր  
հինն այլևս բոլորովին հարկավոր չէ և  
յերբեք այլևս չի կրկնվի: Բայց այստեղ,  
ինչպես և կարծիքների մեջ կատարվող  
նման բոլոր հեղաշրջումների ժամանակ,

առաջացան դանադան խմբավորումներ. և  
այստեղ հին հայացքը գտավ իր պաշտպան-  
ներին, վորոնք նորագույն յերևույթները  
դիտում էյին վորպես կոպիտ ուժի արտա-  
հայտութիւն, վորպես արվեստի ընդհանուր  
անկում, յինթադրելով, թէ հավասարակշռու-  
ված, անհաջող, դատարկ խաղն էլ հենց պետք  
է լինի կատարելագործման որչեկա: Այս  
վերջին հայացքի հիմունքում գրված է  
այնպիսի տրամաբանական ու փիլիսոփա-  
յական արատ, վոր այդ կարելի չէ միայն  
անվանել հասկացողութիւնների տխուր  
խոնարհութիւն: Բայց հակադէր կար-  
ծիքը ևս, այսինքն, վոր նմանն այլևս չի  
կրկնվի, — նույնպես շատ անհիմնավոր է:  
Ռազմական արվեստի ընագավառում նորա-  
գույն յերևույթներից միմիայն ամենա-  
աննշան մի մասը կարելի չէ վերագրել նոր  
հայտնագործութիւններին, կամ գաղափա-  
րական նոր ուղղութիւններին, զբանց մե-  
ծամասնութիւնը հետևանք է հասարակա-  
կան նոր պայմանների ու հարաբերութիւն-  
ների» (Եջ 447—448/253—254):

NB  
ճիշտ է.

ճշմարտու-

թիւնը «սիստե-

մների»

մեջ չէ

...«Այնտեղ, վորտեղ նույնպես չկա սիս-  
տեմ և չափանիշ՝ ճշմարտութիւնը սահմա-  
նելու համար, այնտեղ այնուամենայնիվ  
ինքնըստինքյան ճշմարտութիւնը գոյու-  
թիւն ունի և այն այդ ժամանակ գտնում են  
մեծ մասամբ միայն հմուտ դատողութեան  
միջոցով և տակտիկական մտտեցման հիման  
վրա, վորը մշակվում է յերկարատև փոր-  
ձով: Յեթե նույնիսկ պատմութիւնն այս-  
տեղ չի էլ տալիս ֆորմուլաներ, ապա այ-  
նուամենայնիվ նա այստեղ, ինչպես և  
ամենուրեք, տալիս է դատողութեան ունա-  
կութիւն» (Եջ 451—452/257)...

(NB: Այս հատորը իրենից ներկայացնում է միայն ուրվագծեր) <sup>1</sup>

Եջ 5/264: ...«Հետևապես, հարձակման ահուր պատերազմի ժամանակ, ստրատեգիա-այի տեսակետից, հանդիսանում է հարձակման և պաշտպանության մշտական փոխարինում ու զուգակցում»...

Եջ 9/268: ...«Սակավ դեպքում կամ համենայն դեպս՝ վոչ միշտ է գորավարը ստույգ կերպով նշում, թե ինքն ի՞նչ է ուզում նվաճել, այլ դա կախման մեջ է դնում իրազարձությունների զարգացումից»...

Եջ 93/333—334: «Պատերազմների մեծամասնությունը թվում է միայն փոխադարձ զայրույթի պոթիկում, յերբ յուրաքանչյուրը գեներլի յն դիմում, վորպեսզի պաշտպանի իրեն և վախ ներշնչի ուրիշին, իսկ առիթի դեպքում նաև հարված հասցընի»:

Բոնապարտի որով... (պատերազմն) «ընդունեց իր բացարձակ կերպարանքը» (Եջ 96/336):

(II գլխում (գիրք 8). «Բացարձակ և իսկական պատերազմ»:

...«Պատերազմն ինչ-վոր այնպիսի մի բան է, վոր կարող է լինել յերբեմն մեծ, յերբեմն փոքր չափով պատերազմ»... (Եջ 96/336):

բոլոր պատերազմներն այնպիսին են, վոր յերկուսով էլ «միայն պաշտպանվում են»

(գիտելիտիկա)

<sup>1</sup> Գերմաներեն բնագրի յերբորդ հատորը, վորը մացված է ուստերեն 1937 թվի թարգմանության յերկրորդ հատորի մեջ, պարունակում է 7-րդ մասը—«Հարձակում», 8-րդը—«Պատերազմի պլանը» և հավելվածները:

«XVIII դարում, սիլեզյան պատերազմների <sup>1</sup> ժամանակ, պատերազմը բացառապես միայն կարբինետները գործ էր, ժողովուրդը նրան մասնակցում էր սոսկ վորպես կույր գործիք: XIX դարի սկզբներին կշեռքի նժարների վրա կանգնած էլին արգենյաների կողմերի ժողովուրդները» (Եջ 101/339):

18 և 19 դար:

Տարբերություն

NB

NB

Պատմական փոփոխություններ պատերազմների բնույթի մեջ թաթարական հորդաներ—հնադարի փոքրիկ հանրապետություններ—Հոռո—միջին դարերի վասսալները—17-րդ դարի վերջը և 18-րդ դար:

«ժողովուրդը պատերազմի մեջ թաթարական արշավանքների ժամանակ ամեն բան էր. հնադարյան հանրապետություններում և միջնադարում—յեթե «ժողովուրդ» հոսակացողությունը սահմանափակներ պետության իսկական քաղաքացիներով—свои свои բան. 18-րդ դարի պայմաններում նա ամբիջակ անբան պատերազմի մեջ զարձակ վոչինչ, պահպանելով միմիայն անուղղակի ազդեցություն պատերազմի վրա, շնորհիվ իր ընդհանուր արժանիքներին ու թերություններին» (Եջ 111/348):

Հեղափոխությունը (Ֆրանսական) վերափոխեց այդ ամենը: «Պատերազմը միանգամից հենց նորից զարձակ ժողովրդի գործը» ... (Եջ 116/352) ... «կշեռքի նժարների վրա կանգնեց ամբողջ ժողովուրդը՝ իրեն հատուկ ամբողջ քաղով» (նույն տեղում 353)...

<sup>1</sup> Սիլեզյան պատերազմներ կոչվում են այն յերբք պատերազմները, վոր Ֆրեդրիխ II-ը մղել է Ավստրիայի և նրա դաշնակիցների դեմ՝ Սիլեզիային տիրանալու համար: Առաջին պատերազմը յեղել է 1740—1742 թ. թ., յերկրորդը՝ 1744—1745 թ. թ., յերրորդը, այսպես կոչված «Յոթնամյան»՝ 1756—1763 թ. թ.:



կարևոր է (և մեկ  
անճշտութուն՝  
կարող է պատահել  
և ամբողջ բուրժու-  
ազիսի)

«յիռանդ» NB.  
հպատակներին «վո-  
գելորութուն»

«ժողովուրդների  
մասնակցութունը»

«փոփոխութուն-  
ներ ներսում»  
(հեղափոխութուն)  
և «լտանդ»...

«Այսպիսով, Բոնապարտի ժամանակնե-  
րից պատերազմը, վորն սկզբում մեկ, այ-  
նուհետև մյուս կողմում<sup>1</sup> նորից դարձել էր  
ամբողջ ժողովրդի դործը, ստացավ միան-  
գամայն այլ բնույթ, ավելի ճիշտ, խիստ  
մոտեցավ իր իսկական բնույթին, իր բա-  
ցարձակ կատարելությանը: Գործի զբված  
միջոցները չունեցին տեսանելի սահմաններ.  
այդ սահմանները կորչում էին կառավա-  
րութունների և նրանց հպատակների  
յիռանդի ու վոգելորության մեջ» (Էջ  
118/354):

«Այսպես բռնկեց պատերազմի տարեր-  
քը, ազատագրված իր բոլոր պայմանական  
սահմանափակումներից, իր ամբողջ բնական  
ուժով: Դրա հիմունքն էր ժողովուրդների  
մասնակցութունն այդ պետական մեծ գոր-  
ծին, և այդ մասնակցութունը բղխում էր  
մի մասով այն պայմաններից, վոր Ֆրան-  
սական հեղափոխութունը ստեղծեց յուրա-  
քանչյուր յերկրի ներսում, մի մասով էլ  
այն վտանգից, վորով սպառնում էին  
Ֆրանսացիները բոլոր ժողովուրդներին:

«Արդյոք դա միշտ կմնա այդպես, ար-  
դյոք բոլոր գալիք պատերազմները Յեվրո-  
պայում մղվելու յեն պետության բոլոր ու-  
ժերի լարման պայմաններում և, հետևապես,  
հանուն մեծ ու ժողովուրդներին մոտիկ շա-  
հերի,— թե հետագայում կառավարութուն-  
ները նորից կմեկուսանան ժողովրդից,—  
այդ լուծելը դժվար կլինի, և մենք ամե-  
նից ավելի քիչ չափով ենք մեզ իրավասու  
համարում այդպիսի հարց լուծելուց» (Էջ  
119/354—355)...

յուրաքանչյուր  
ժամանակ— «իր  
պատերազմները»

«յուրաքանչյուր  
դարաշրջանի  
առանձնահատկու-  
թյունները» պետք  
է հաշվի առնվեն  
գորավարին հաս-  
կանալու համար

մեր նպատակն է... «ցույց տալ, վոր  
ամեն մի դարաշրջան ունեցել է իր սեփա-  
կան պատերազմները, իր սեփական սահմա-  
նափակիչ պայմանները, իր սեփական դրժ-  
վարությունները: Յուրաքանչյուր պատե-  
րազմ, հետևապես, կունենար նաև պատե-  
րազմի իր սեփական թեորիան, յեթե մար-  
դիկ նույնիսկ ամենուրեք վաղ թե ուշ հա-  
կումն ունենային այդ ուղղական թեորիան  
մշակելու փիլիսոփայական սկզբունքներին  
համապատասխան: Հետևաբար, յուրաքան-  
չյուր դարաշրջանի իրադարձությունները  
պետք է գնահատվեն նրանց յուրահատկու-  
թյունները հաշվի առնելով, և նա յե միայն  
իվիճակի հասկանալու և ճիշտ գնահատելու  
գորավարին, ով վոր կկարողանա փոխադր-  
վիլ յուրաքանչյուր դարաշրջանը վոչ այն-  
քան մանր հանգամանքների սկրուպուլյո-  
զային ուսումնասիրման միջոցով, վորքան  
խոշոր իրադարձությունների խորաթա-  
փանց քննարկման միջոցով» (Էջ 119—  
—120/355—356)...

NB

Մեկ դեպքը—յերբ մեկին ձեռնառու յե  
ժամանակ շահել (ձեռնառու յե պաշտպանա-  
կան պատերազմ մղել): Մյուս դեպքը—ձեռն-  
առու յե ոգտագործել ժամանակը, վորն  
ապագայում վոչինչ չի խոստանում (ձեռն-  
առու յե հարձակողական պատերազմը):

«Յերբորդ դեպքը, վորը գուցե ամենից  
ավելի ախպիկն է, կլինի այն, յերբ յեր-  
կու կողմերն էլ ապագայից վորոշակի վո-  
րեք բան սպասելու հարկ չունեն, յիրբ ապա-  
գայից, հետևաբար, նույնպես չի կարելի  
ստանալ վորոշիչ հիմք: Այդ դեպքում, սկի-

<sup>1</sup> Նկատի յեն առնվում մեկ կողմից նապոլեոնյան Ֆրանսիան, մյուս  
կողմից—Ռուսաստանը, Իսպանիան, Ավստրիան, Պրուսիան և այլն:

«քաղաքականապես» հարձակվող

NB  
( հ ա ս կ ա ց ու  
դ ու ր յ ու ն )

ներևորեն, հարձակողական պատերազմ պետք է մղի նա, ով վոր հանդիսանում է քաղաքականապես հարձակվողը, այսինքն, նա, ով վոր դրա համար ունի դրական հիմք. քանի վոր նա այդ նպատակի համար էլ հենց զինվում էր, այն ամբողջ ժամանակը, վոր ծախսվում է առանց բավականաչափ ծանրակշիռ պատճառի, նրա համար հանդիսանում է (ընդգծումը՝ Կլաուզեվիցի) գուտ կորուստ» (եջ 133/367):

«քաղաքական նպատակի բնույթը» վճռողական ազդեցություն ունի պատերազմը վարելու վրա...

...«Մենք արդեն... հավաստեցինք, վոր քաղաքական նպատակի բնույթը, մեր կամ հակառակորդի պահանջների մեծությունը և մեր ամբողջ քաղաքական դրուժյունը փաստորեն վճռողական ազդեցություն ունի պատերազմ վարելու վրա» (եջ 135/369)...

«Յեվրոպական քաղաքականություն մեջ վաղուց սովորություն է դարձել, վոր փոխադարձ պաշտպանական ու հարձակողական դաշինքներ կնքելով, պետությունները պարտավորվում են փոխադարձ աջակցություն ցույց տալ միմյանց, բայց վոչ այնպիսի չափով, վոր մեկ դաշնակցի թըշնամանքն ու շահերը դրա շնորհիվ պարտադիր դառնան մյուսի համար. աջակցությունը միայն նրանումն է կայանում, վոր պետությունները, ուշադրություն չդարձնելով վոչ պատերազմի առարկային, վոչ էլ հակառակորդի ջանքերին, միմյանց խոտանում են վորոշակի, սովորաբար շատ չափավոր ուղղմական ուժ (եջ 136/369—370)...

NB

...յուրաքանչյուրը, նայած այն վտանգի

աստիճանին, վորին նա յենթարկվում է, և նայած այն ոգուտին, վոր նա կարող է սպասել, դնում է մի վորոշ փայ՝ 30—40 հազար մարդ, և վարվում է այնպես, վոր իրը թե այդ գործում ինքը կարող է կորցնել միայն իր այդ բաժինը» (եջ 137/370—371)...

...«Այն» (այդպիսի մաներան) «թերատու թյուն է, անոմալիա, վորովհետև ինչպես պատերազմը, այնպես էլ խաղաղությունն. ըստ էության այնպիսի հասկացողություններ են, վորոնց անհնարին է սահմանադատել ըստ աստիճանների. այնուամենայնիվ, այդ մաներան հանդիսանում է վոչ թե սոսկ զիվանագիտական սովորություն, վորին կարող էր արձամարնել բանականությունը. այն խորապես արմատավորվում է մարդկանց բնական սահմանափակվածություն և թուլություն մեջ» (եջ 137/371):

պատերազմ և խաղաղություն հասկացողություն «աստիճաններ», «գրադացիաներ»

...«Յեթե ընդունենք քաղաքական նպատակի այդ ազդեցությունը պատերազմի վրա, իսկ դա ընդունել անհրաժեշտ է, ապա չի կարելի վորոշել այդ ազդեցության սահմանները, և ստիպված կլինենք կամա թե ակամա հասնել մինչև այնպիսի պատերազմների ճանաչումը, վորոնք կայանում են միայն հակառակորդին սպառնալու մեջ և մղվում են իամրապնդումն բանակցությունների» (ընդգծումը Կլաուզեվիցինն է) (եջ 138/372)...

NB

«ՎԵՅԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ

Ամենակարևոր  
գլուխը

Բ. ՊԱՏԵՐԱԶՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԻՔ ԵՆ

...«Այդ միասնորթ թյունը» (միասնու-  
թյուն, վորը «պրակտիկ կյանքում» միաց-  
նում է հակասական տարրերը) «կայանում  
է այն հասկացողության մեջ, վոր պատեղա-  
մբ միայն մի մասն է քաղաքական հարաբե-  
րությունների, այլ բնավ վնչ ինքնուրույն  
ինչ-վոր մի բան (ընդգծումը կլառնդեվիցինն  
է) (Եջ 139/373—374):

«Բոլորն էլ դիտեն, վոր պատերազմը  
ծագում է կառավարությունների միջև ու  
ժողովուրդների միջև յեղած քաղաքական  
հարաբերությունների հետևանքով միայն.  
բայց սովորաբար բանն այնպես են պատ-  
կերացնում, վոր կարծեք թե, պատերազմն  
սկսվելով, այդ հարաբերությունները դա-  
դարում են և ստեղծվում է միանգամայն  
այլ դրություն, վորը յենթարկված է միայն  
իր առանձին որենքներին:

«Մենք պնդում ենք հակառակը. վոր  
պատերազմը վնչ այլ ինչ է, քան քաղա-  
քական հարաբերությունների շարունակու-  
մը՝ այլ միջոցների միջամտությամբ: Մենք  
ասում ենք՝ այլ միջոցների միջամտու-  
թյամբ, վորպեսզի դրա հետ միասին ընդ-  
գծենք, վոր այդ քաղաքական հարաբերու-

թյունները բուն պատերազմի հետևանքով  
չեն դադարում, չեն փոխակերպվում բոլոր-  
ովին ինչ-վոր այլ բանի, բայց ըստ ելու-  
թյան շարունակվում են, ինչպիսի ձև էլ  
վոր ընդունեն այն միջոցները, վորոնցից  
նրանք ոգտվում են, և վոր այն գլխավոր  
գծերը, վորոնցով զարգանում և կապակց-  
վում են պատերազմական իրադարձու-  
թյունները, ուրվագծված են քաղաքակա-  
նության կողմից, վորն ազդում է պատե-  
րազմի վրա ընդհուպ մինչև հաշտությունը:  
Յե՛վ դա ինչպես կարելի չի պատկերացնել  
այլ կերպ: Մի՞թե յերբեիցե դիվանագիտա-  
կան նոտաների հետ միասին դադարում  
են դանազան ժողովուրդների ու կառավա-  
րությունների քաղաքական հարաբերու-  
թյունները: Մի՞թե պատերազմը նրանց  
մտքերի շարադրման ու արտահայտման  
մեկ այլ յեղանակը չէ միայն: Պատերազ-  
մը, իհարկե, ունի իր սեփական քերակա-  
նությունը, բայց վնչ սեփական տրամաբա-  
նությունը:

NB

«Հետևապես, պատերազմը յերբեք չի  
կարող խզվել քաղաքական հարաբերու-  
թյուններից, և յեթե դա վորևե տեղ կա-  
տարվում է, ապա դրանով իսկ վորոշ չա-  
փով կտրատվում են կապակցող բոլոր թե-  
լերը և ստացվում է անիմաստ ու աննպա-  
տակ ինչ-վոր մի բան:

«Առանց այսպիսի հասկացողության չի  
կարելի յուր գնալ նույնիսկ այն դեպքում,  
յեթե պատերազմը լինի ամբողջապես պա-  
տերազմ, ամբողջապես թշնամության ան-  
զուսպ տարերքի արտահայտություն: Մինչ-  
դեռ իրականում մի՞թե այն բոլոր գործոն-

ները, վորոնց վրա պատերազմը հիմնված է և վորոնք վորոշում են նրա գլխավոր ուղղութիւնը, ինչպէս որինակ՝ սեփական ուժը, հակառակորդի ուժը, յերկու կողմերի դաշնակիցները, յերկու կողմերի ժողովուրդներին ու կառավարութիւններին բնույթը և այլն, ինչպէս վոր մենք այդ թվարկեցինք առաջին գրքի առաջին գլխում, — մի՞թե այս ամենը վոչ-քաղաքական բնույթի գործոններ են և մի՞թե դրանք կապված չեն բոլոր քաղաքական հարաբերութիւններին հետ այն անտիճան սերտորեն, վոր դրանք դժվար է միմյանցից անջատել: — Բայց այսպիսի ըմբռնումը դառնում է կրկնակի անհրաժեշտ, յի՞թե մենք նկատի առնենք, վոր իսկական պատերազմն էլ բնավ հետևողականորեն չի ձգտում առավելագույն ծայրահղութիւն, ինչպիսին նա պետք է լինէր համաձայն իր հատկացողութիւն, բայց վոր իրականում պատերազմը թերատ է, ներքուստ հակառական. վոր այն վորպէս այդպիսին չի կարող հետևել իր սեփական որենքներին, այլ պետք է դիտվի վորպէս մի այլ ամբողջի մասը, և այդ ամբողջը — քաղաքականութիւնն է (եջ 139—141 374—375):

պատերազմը = «մասն է ամբողջի»:  
«Այդ ամբողջը = քաղաքականութիւնն է»

...«Քաղաքականութիւնը պատերազմի ամենակործան տարերքը այսպիսի դարձնում է իր սոսկ հասարակ գործիքը. մարտական ահարկու սուրը, վորը պահանջում է, վորպէսզի նրան բարձրացնեն յերկու ձեռքով, լարելով բոլոր ուժերը՝ մի վերջնական հարված հասցնելու համար, քաղաքականութիւնն շնորհիվ վերածվում է հեշտութիւնի կառավարվող թրի, յերբեմն նույնիսկ մար-

տասուների, վորով որամարզվում են արվեստի բոլոր կանոններով» (եջ 141 375):

...«Քանի վոր պատերազմը քաղաքականութիւնն է մի մասն է, ապա, հետևապէս, այն կընդունի նաև նրա հատկութիւնները: Յերք քաղաքականութիւնը դառնում է ավելի դրանդիոզ ու հզոր, ապա այդպիսին է դառնում նաև պատերազմը. և այդ աճումը կարող է հասնել այնպիսի աստիճանի, վոր պատերազմը կընդունի իր բացարձակ կերպարանքը» (եջ 141 375—376):

միայն այդ տեսակետից

«բոլոր պատերազմները միևնույն տեսակի բաներ են»

...«Միայն այս տեսակետից պատերազմը նորից դառնում է միասնութիւն, միայն այս դեպքում կարելի չէ բոլոր պատերազմները դիտել վորպէս միևնույն տեսակի (ընդգծումը կլատելովիցինն է) բաներ. միայն այսպիսի պատկերացման դեպքում է մեր դատողութիւնը ստանում ճիշտ և ստույգ հենարան ու տեսակետ, վորոնց հիմունքով պետք է օտեղծել խոշոր պլաններ և գնահատել դրանք:

NB

«Իհարկե, քաղաքական տարրը խորը չի թափանցում պատերազմի մանրամասնութիւններին մեջ. պիկետները և պահակները» (sic!) «կարգվում են վոչ համաձայն քաղաքական նկատառումներին. բայց այնքան ավելի վճռական է քաղաքական տարրի ազդեցութիւնը՝ ամբողջ պատերազմի պլա-

նը, կամ պանխայի պլանը և հաճախ նույն-  
իսկ ճակատամարտի պլանը կազմելիս...

...«Ամենակարևորը կյանքում—այնպիսի  
տեսակետ գտնելն է, վորից յեղնելով բոլոր  
բաները կարողանան հասկանալի լինել ու  
զնահատովել, և այդ տեսակետին կանգնելը.  
վորովհետև միայն միասնական (ընդգծումը  
հեղինակինն է) տեսակետի հիմունքով է  
հնարավոր ընդգրկել յերևույթների ամբողջ  
միակցությունը իբրև մի ամբողջություն,  
և տեսակետի միասնությունը միայն կա-  
րող է մեզ գերծ պահել հակասություններից:

«Յեթե, հետևապես, պատերազմի պլանը  
կազմելիս զնահատականների մեջ անթույ-  
լատրելի յեն յերկու կամ մի քանի տեսա-  
կետներ, որինակ՝ զինվորի, ագմինիստրա-  
տորի, քաղաքականագետի տեսակետը, և  
այլն, ապա հարց է ծագում, թե անհրա-  
ժեշտ է արդյոք, վոր հենց քաղաքականու-  
թյունը լինի այն տեսակետը, վորին պետք  
է յենթարկվի ամբողջ մնացածը:

«Մենք յեղնում ենք այն բանից, վոր  
քաղաքականությունն իր մեջ միավորում  
և համաձայնեցնում է բոլոր շահերը՝ ինչպես  
ներքին կառավարման, այնպես և մարդա-  
սիրության ու մնացած բոլորի, ինչ վոր  
կարող է առաջադրել փիլիսոփայական բա-  
նականությունը, վորովհետև ինքնբնույթ-  
յան քաղաքականությունը վոչինչ է. նա  
միայն այդ բոլոր շահերի պաշտպանն է՝  
այլ պետությունների առջև: Վոր քաղաքա-  
կանությունը կարող է ունենալ սխալ ուղ-

NB  
մտեցում մար-  
քսիզմին

քաղաքականու-  
թյունը—«ամբողջ  
հասարակության  
բոլոր շահերի ներ-  
կայացուցիչ»

...պատերազմները  
մղվում են վոչ հա-  
սարակ թշնամու-  
թյան հետևան-  
քով...

«քաղաքականու-  
թյունն է ծնել  
պատերազմը»

քաղաքականու-  
թյունն է արդյոք  
զլխավորը:

ինչ է քաղաքա-  
կանությունը

ընդգծումը  
հեղինակինն է

ություն, ծառայել գերազանցապես փա-  
ռասիրությանը, մասնավոր շահերին, կա-  
ռավարողների սնահատությանը,— դա սրան  
չի վերաբերում: Վոչ մի դեպքում ուղմա-  
կան արվեստը չի հանդիսանում քաղաքա-  
կանության «դատարարը»: Մենք այս-  
տեղ կարող ենք քաղաքականությունը  
գիտել միայն վորպես ամբողջ հասարակու-  
թյան բոլոր շահերի ներկայացուցիչ  
(եջ 142—143, 376—377):

...«Այն կարծիքը, վոր քաղաքական տե-  
սակետը պատերազմ սկսվելու հետ մեկտեղ  
դադարում է գոյություն ունենալուց, հիմք  
կունենար միայն այն դեպքում, յեթե պա-  
տերազմները լինեցին վոչ թե կյանքի, այլ  
մահու կռիվ՝ հասարակ թշնամության  
հետևանքով. մինչդեռ պատերազմներն այն-  
ձևով, ինչպես դրանք լինում են իրակա-  
նում, վոչ այլ ինչ են, քան քաղաքակա-  
նության արտահայտություն, ինչ մենք  
վերևում արդեն ցույց տվինք: Քաղաքա-  
կան տեսակետը յենթարկել ուղմականին—  
անիմաստ է, քանի վոր քաղաքականու-  
թյունն է ծնել պատերազմը: Քաղաքակա-  
նությունը՝ բանականություն է, իսկ պա-  
տերազմը միայն գործիք, և վոչ թե հակա-  
ռակը: Հետևապես, հնարավոր է մնում մի-  
այն ուղմական տեսակետի յենթարկումը  
քաղաքականին:

«Որհնելով իսկական պատերազմի բնույ-  
թի հարցի մասին, մենք վերհիշում ենք  
այս գրքի յերրորդ գլխում առածը, ամեն  
մի պատերազմ պետք է ամենից առաջ գիտվի  
իր հնարավոր բնույթով և իր գլխավոր ուր-  
վագումներով, քանի վոր դա բխում է քա-  
ղաքական մեծաբյուրեղներից ու հարաբերու-  
թյուններից. հաճախ,— մեր որերում մենք

կարող ենք վստահորեն ասել մեծ վասաւր, —  
պատերազմը պետք է դիտվի վորպէս որդա-  
նական ամբողջութուն, վորից չի կարելի  
անջատել նրա բաղկացուցիչ մասերը, վորի  
մեջ, հետեապես, յուրաքանչյուր առանձին  
գործողութուն պետք է միաձուլվի ամբողջի  
հետ և յեղնի այդ ամբողջի զարգացումը.  
այսպիսով, մեզ համար միանգամայն հաս-  
կանալի ու պարզ կդառնա, վոր պատե-  
րազմի ղեկավարման համար բարձրագույն  
տեսակետը, վորից պետք է յեղնեն գլխա-  
վոր ուղղութուն տվող գծերը, կարող է  
լինել միայն քաղաքականութեան տեսա-  
կետը:

«Այս տեսակետից պատմութունը... դառ-  
նում է ավելի հստակնալի (եջ 143—  
144|377—378)»

NB

...«Մի խոսքով, ռազմական արվեստը,  
դիտվելով բարձրագույն տեսակետից, դառ-  
նում է քաղաքականութուն, սակայն, հաս-  
կանալի յե, այնպիսի քաղաքականութուն,  
վորը ծնում է ճակատամարտեր, փոխանակ  
նոտաներ գրելու (եջ 144—145|379)»

«Ճիշտ այդպէս էլ, մեր ամբողջ փորձը  
խոսում է այն բանի ոգտին, վոր, չնայած  
ժամանակակից ռազմական գործի մեծ բազ-  
մազանութեանն ու զարգացմանը, պատե-  
րազմի գլխավոր ղեկավարող գծերն այնու-  
ամենայնիվ միշտ վորոշվել են կարիներ-  
ների, այսինքն՝ տեխնիկականորեն արտա-  
հայտված, միայն քաղաքական, և վոչ  
թե ռազմական ինստանցիայի կողմից»  
(եջ 145|379)»

Որինակ՝ մեծ փոփոխութունները ռազ-  
մական գործի մեջ XVIII դարի վերջերից:  
Ի՞նչն է դրանց պատճառը:

«Փրանսական հեղափոխութեան հսկայա-  
կան ազդեցութունն արտառանձանյան յեր-  
կրներէ վրա կայանում է, ակներեարար,  
վոչ այնքան պատերազմի նոր միջոցների  
ու պատերազմը վարելու նկատմամբ նոր  
հայացքների մեջ, վորքան պետական ու  
վարչական կառավարման միանգամայն փո-  
փոխված մեթոդների մեջ, կառավարութեան  
ընույթի, ժողովրդի դրութեան մեջ և այլն:  
Վոր մյուս յերկրները կառավարութուններն  
այդ բաների վրա նայում էին սխալ կեր-  
պով, վոր նրանք սովորական միջոցներով  
ուզում էին ստեղծել հակակշիւ՝ նոր և  
անզուսպ ուժերի հանդէպ, այս ամե-  
նը—քաղաքականութեան սխալներն են»  
(եջ 147—148|382)»

NB

...«Հետեապես, կարելի յե ասել—  
հեղափոխութեան քսանամյա հաղթանակ-  
ները հանդիսանում են գլխավորապէս  
նրան դիմակայող կառավարութունների  
սխալ քաղաքականութեան հետեանքը»  
(եջ 149|382):

...«Ճշմարիտ է, պատերազմն ինքը իր  
եյութեամբ, իր ձևերով նույնպէս նշանա-  
կելի փոփոխութուններ է կրել, վորոնք  
նրան մոտեցրել են նրա բացարձակ կերպե-  
րանքին. բայց այդ փոփոխութուններն  
առաջ են յեկել վոչ թե այն պատճառով,  
վոր Փրանսական կառավարութունը վո-  
րոշ չափով եմանսիպացիայի յենթարկեց  
պատերազմը, այն՝ այսպէս ասած՝ արձակեց  
քաղաքականութեան կապից. այդ փոփո-  
խութունները ծագեցին այն նոր քաղա-  
քականութունից, վորը դուրս յեկավ Փրան-  
սական հեղափոխութեան ընդերքից, ըստ-  
վորում վոչ միայն Փրանսիայի համար, այլ

ճիշտ  
է

և ամբողջ Յեփրոսայի համար: Այդ քաղաքահանությունն առաջ քաշեց այլ միջոցներ ու այլ ուժեր և այդ պատճառով հնարավոր դարձրեց պատերազմն այնպիսի յեռանդով վարելը, վորի մասին այդ պայմաններից դուրս մտածել ել անգամ չէր կարելի:

«Այսպիսով, պատերազմական արվեստի մեջ կատարված իսկական փոփոխությունները հանդիսանում են փոփոխված քաղաքահանության հետևանքը: Դրանք բնավ ապացույց չեն ծառայում այն բանի, վոր հնարավոր է մեկի անջատումը մյուսից, այլ ընդհակառակը, դրանք հանդիսանում են նրանց սերտ միասնության վճռական ապացույցը:

«Ուրեմն, մեկ անգամ ևս, պատերազմը քաղաքականության գործիք է. այն պետք է անխուսափելիորեն կրի վերջինիս բնույթը. այն պետք է չափել քաղաքական չափանիշով: Ուստի, պատերազմներ մղելն իր գլխավոր զծերով ինքը՝ քաղաքականությունն է, վորը գրիչը փոխարինել է սրով, բայց դրա հետևանքով չի դադարել իր սեփական որենքներով մտածելուց» (եջ 149—150|383: Գլխի վերջը):

«Յեթե կան պետութայուններ, վորոնք պարտվել են հաջորդաբար հասցված հարվածներից և վորոնց համար ժամանակը—պաշտպանվողի այդ պահապան հրեշտակը—յեղել է կործանարար, ապա անհամար չափով ավելի բազմաթիվ են այնպիսի որինակները, յերբ հարձակվողի մտադրություններն ամբողջապես ձախողվել են քաղաքուկներին հետևանքով: Հիշենք միայն յոթնամյա պատերազմի արդյունքների մասին,

պատերազմը =  
քաղաքականություն, վորը «գրիչը փոխարինել է սրով»:

յերբ ավտորացիները փորձում եյին նպատակին հասնել այնպիսի դանդաղորդությամբ, շրջահայեցությամբ ու զգուշությամբ, վոր լիակատար անհաջողություն կրեցին» (եջ 181|410):

Վսչ բե «Պատերազմի մասին» յերկերից, այլ «Պատերազմական դասերի... տեսությունից»<sup>1</sup>:

NB  
«Պաշտպանողական պատերազմ» քաղաքականության և ստրատեգիայի մեջ

...«Բաղաքականորեն պաշտպանողական պատերազմ կոչվում է այնպիսի պատերազմը, վորը մղում են, վորպեսզի պաշտպանեն իրենց անկախությունը, ստրատեգիորեն պաշտպանողական պատերազմ կոչվում է այնպիսի արշավանքը, վորի մեջ յես սահմանափակվում են հակառակորդի դեմ կռվելով պատերազմական գործողությունների այն ռազմաբեմում, վոր ինքս ինձ համար նախապատրաստել եմ այդ նպատակով: Այդ ռազմաբեմում յես մղում եմ հարձակողական, թե պաշտպանողական բնույթի մարտ,—դրանից դրությունը չի փոխվում» (եջ 247|445):

NB

ճիշտ է

Վ եր ջ Կ Լ ա ու զ ե վ ի ց ի ց կ ա տ ա ր վ ա ծ ք ա ղ վ ա ծ ք ն ե ը ի



<sup>1</sup> «Պատերազմական դասերի տեսություն, վոր հեղինակը ներկայացրել է... թագաժառանգին՝ 1810, 1811 և 1812 թվականներին»: (Տես՝ հտտ. II, էջ 431, հավելված՝ «Պատերազմի կարևորագույն սկզբունքները» անունով):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62


Խմբագրության նախարանը . . . . .	3
Կենսագրական տեղեկանք Կլաուդեվիցի մասին . . . . .	9
Գենեբալ Կարլ Ֆոն Կլաուդեվիցի հեամանվան աշխատությունները . . . . .	10
Կատերագմի և պատերազմներ վարելու մասին . . . . .	—
Պատերագմի մասին: Հատ. I . . . . .	18
Պատերագմի մասին: Հատ. II . . . . .	28
Պատերագմի մասին: Հատ. III . . . . .	34
«Գլուխ VI. Բ. պատերազմը քաղաքականության գործիք և» . . . . .	34

Քարզմանիչ Կ. Վարդանյան  
 Պատերագմի Բ. Ն. Դավթյան  
 Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
 Սրբագրիչ Հ. Դոլուխանյան  
 Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավիտի լեագոր № 4—2530, հրատ. № 739  
 Պատվեր № 202, տիրաժ 5000  
 Թղթի չափսը 60×92<sup>1</sup>/<sub>16</sub> (38.400 տպ. նիշ. 1 տպ. մամուլում)  
 3 տպ. մամուլ, 1<sup>1</sup>/<sub>2</sub> թերթ թո. դթ  
 Հանձնված և արտադրության 7/X 1939 թ.  
 Ստորագրված և տպագրելու 10/XI 1939 թ.  
 Գինը 1 ո. 50 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության  
 տպարան, Յերևան. Ալլահիերդյան № 65





ՀՀ Ազգային գրադարան



NL0174557

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.

В. И. ЛЕНИН  
ЗАМЕЧАНИЯ НА СОЧИНЕНИЯ  
КЛАУЗЕВИЦА «О ВОЙНЕ»

Государственное издательство полит. литературы  
Ереван 1939